

Արձանագրություն թիվ 2

2021 թվականի փետրվարի 11-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ <<Բ>> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, ուսուցիչներ, դասղեկ Վերա Ալիխանյանը, տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զ. Գևորգյանը:

Օրակարգում

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:
2. 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:
3. Ընթացիկ հարցեր(կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն):

1. Լսեցին- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Վ.Ալիխանյանը՝ մեկ առ մեկ ներկայացնելով առարկաները և գնահատականները: Նա նշեց, որ 1-ին կիսամյակում դասարանում չկա գերազանցիկ, 3 ուսման առաջավորներ:

1. Հակոբյան Աստղիկ Հակոբի
2. Հայրապետյան Ինգա Արմենի
3. Ղարիբյան Սվետլանա Արթուրի

Անբավարար երկու աշակերտ

1. Եղիազարյան Վոլոդյա Թաթուլի
2. Կարապետյան Հակոբ Խաչիկի

Որակական ցուցանիշը՝ 16.6%, առաջադիմություն՝ 88.8%:

Որոշեցին

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր և գրենական պիտույքներ, օգնել հետ մնացող աշակերտներին, բացառել հեռախոսների կիրառումը դասերի ընթացքում:

2. Լսեցին - 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի խնդիրներն ու անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Վ.Ալիխանյանը, ով ներկայացրեց 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակում 11-րդ <<Բ>> դասարանի կատարած աշխատանքները և ներկայացրեց նոր՝ 2-րդ կիսամյակի անելիքներն ու խնդիրները: Վ.Ալիխանյանը առաջարկեց 2-րդ կիսամյակում մեծ ուշադրություն դարձնել կարգապահությանն ու առաջադիմությանը՝ շտկելով նախորդ կիսամյակի սխալները և բացթողումները: Ելույթ ունեցավ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն. Հովհաննիսյանը՝ նշելով, որ դասարանն ունի լուրջ կարգապահական խնդիր

պայմանավորված տղաների վարքային խնդիրներով, հորդորեց խնդրահարույց աշակերտների՝ Հակոբի, Վուրդիայի և Գեղամի ծնողներին ուշադիր և հետևողական լինել իրենց երեխաների կարգապահության նկատմամբ: Դասղեկ Վ. Ալիխանյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների առաջադիմության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին սերտ կապ պահպանել ուսուցիչների և դպրոցի հետ, ինչը կխթանի սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ճիշտ ու արդյունավետ կազմակերպելուն: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել անհրաժեշտ գրենական պիտույքները, լավ պահել, պահպանել դասագրքերը, մասնավորապես չկորցնել դրանք:

Որոշեցին.- Ծնողները խոստացան հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հաճախակի այցելել դպրոց, կապ հաստատել ուսուցիչների, դասղեկի, տնօրենի հետ:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Վ. Ալիխանյանը նշեց, որ 2-րդ կիսամյակում ևս դպրոցը աշխատելու է վեցօրյա ռեժիմով /9-00--13-55/: Նա հորդորեց ծնողներին հետևել, որ իրենց երեխաները հավուր պատշաճի հաճախեն դպրոց: Պահել ծնող-դասղեկ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավելագույնս ուշադիր լինել նրանց հաճախումներին, դասերին պատրաստվածությանը և աշակերտավայել կարգապահությանը:

Ծնողական խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝



/ Ամալյա Մկրտչյան

/ Տաթև Թարոյան